Վարպետաց դաս

ՀՊՏՀ-ի կարիերայի կենտրոն

Թեմա՝ «Ինչպես լինել մրցունակ աշխատանքի շուկայում»

(միջոցառման անվանումը)

2022թ.-ի նոյեմբերի 29-ին Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջի «Շուկայաբանություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողները ՀՊՏՀ-ում մասնակցեցին «Ինչպես լինել մրցունակ աշխատանքի շուկայում» թեմայով վարպետաց դասին:

Քոլեջից դասընթացին մասնակցում էին թվով 11ուսանող: Ըստ գնահատման թերթիկների պատասխանների, ունենք հետևյալ տոկոսային հարաբերակցությունը:

N	Հարցը	Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար
1.	Ձեր սպասելիքները վարպետաց դասից	36%	36%	27%	
2.	Դասի արդյունավետությունը	27%	64%	9%	
3.	Որքանով դասընթացը նպաստեց մասնագիտական կարողություններին և հմտություններին	36%	64%	9%	
4.	Արդյո՞ք կարևորում եք նմանատիպ դասընթացների կազմակերպումը	72%	18%		

Հանդիպման ընթացքում ուսանողները սովորեցին կազմել մրցունակ ինքնակենսագրական և CV, ինչպես նախապատրաստվել հարցազրույցին, ձեռք բերեցին կարիերայի կառավարման վերբերյալ գիտելիքներ և հմտություններ, ինչպես նաև մասնակցեցին «Կեղծ հարցարզրույց» խաղին: Մասնակից ուսանողների 72%-ը նշել են, որ կարևորում են նմանատիպ դասընթացներին մասնակցությունը: Ցանկություն են հայտնել մասնակցել նաև մասնագիտական վարպետաց դասերի:

Ճանաչողական այց

ՀՀ Կենտրոնական բանկ

(միջոցառման անվանումը)

2022թ.-ի հոկտեմբերի 3-ին Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջի «Շուկայաբանություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողները ճանաչողական այց կատարեցին ՀՀ Կենտրոնական բանկ:

Այցին մասնակցում էին թվով 11ուսանող: Ըստ գնահատման թերթիկների պատասխանների, ունենք հետևյալ տոկոսային հարաբերակցությունը:

N	Հարցը	Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար
1	Այցից սպասելիքները	54%	45%		
2	Այցի արդյունավետությունը	73%	27%		
3	Որքանով այցը նպաստեց մասնագիտական կարողություններին և հմտություններին	9%	64%	27%	
4	Արդյո՞ք կարևորում եք նմանատիպ այցերի կազմակերպումը	82%	18%		

Այցի ընթացքում ուսանողները ծանոթացան Կենտրոնական բանկի ստեղծման պատմությանը, հիմնական գործառույթներին, իրականացվող ծրագրերին, արժույթի զարգացման պատմությանը:

Ինչպես նաև դիտեցին մուլտֆիլմ «Կենտրոնական բանկի դերը շուկայում»: Մասնակից ուսանողների 82%-ը նշել են, որ կարևորում են նմանատիպ դասընթացներին մասնակցությունը, 73%-ը՝ այցը համարել է արդյունավետ:

Ցանկություն են հայտնել մասնակցել նմանատիպ Ճանաչողական այցերի: